

Հ Ա Մ Ա Ձ Ա Յ Ն Ա Գ Ի Ր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ, ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԹՈՒՐԲՄԵՆՍՏԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԱՌԵՎՏՐԱՏՆԵՍԱԿԱՆ
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը, Իրանի Իսլամական Հանրապետության կառավարությունը
և Թուրքմենստանի կառավարությունը, այսուհետ՝ Կողմեր,

Հայաստանի Հանրապետության, Իրանի Իսլամական Հանրապետության և Թուրքմենստանի միջև համատեղ
եռակողմ շոշակագրի համաձայն, որը ստորագրվել է երեք պետությունների արտաքին գործերի նախարարների
կողմից 1995 թվականի ապրիլի 8-ին՝ Թեհրանում, որը համապատասխանում է 1374 թվականի Ֆերվերդենի 19-ին,
և հաշվի առնելով նրանց փոխադարձ հետաքրքրությունը առևտրատնտեսական կապերի ամրապնդման և
զարգացման, ինչպես նաև երեք երկրների միջև հավասարության, անխտրականության և փոխադարձ
հետաքրքրության հիման վրա համագործակցության ընդլայնման և բազմազանության փոխշահավետությունը,

համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

Հոդված 1

Երկրների միջև ապրանքների և արտադրանքների փոխադարձաբար մատակարարումները և երեք
պետությունների իրավաբանական անձանց միջև կնքված պայմանագրերը կկատարվեն սույն Համաձայնագրի
շրջանակներում և յուրաքանչյուր երկրի գործող օրենքներին և կանոններին համապատասխան, ինչպես նաև
առևտրի միջազգային նորմերին համապատասխան:

Հոդված 2

Կողմերը սույն Համաձայնագրի շրջանակներում մեկամյա ժամկետում կքննարկեն Հայաստանի
Հանրապետությունից Իրանի Իսլամական Հանրապետություն ծառայությունների և ապրանքների
մատակարարման իրականացման հնարավորությունները, Թուրքմենստանի և Հայաստանի Հանրապետության
միջև բնական գազի, էներգակիրների և Թուրքմենստանից Հայաստանի Հանրապետություն այլ արտադրանքի
մատակարարման համաձայնագրերով նախատեսված ապրանքային մատով իրանական կողմից Թուրքմենստան
ապրանքների և ծառայությունների միաժամանակյա փոխհատուցման հիմունքներով:

Կողմերը պայմանավորվեցին ծառայությունների և ապրանքների փոխադարձաբար մատակարարման
ծրագրերի համակարգումից հետո նշանակել իրենց լիազորված իրավաբանական անձանց՝ Կողմերի հավասար
բաժնային մասնակցությամբ եռակողմ առևտրային ձեռնարկությունների ստեղծման համար:

Հոդված 3

Կողմերը համաձայնեցին, որ ապրանքների և արտադրանքի կարևորագույն տեսակների մատակարարման
կարգավորումը կիրականացվի ամենամյա արձանագրությունների հիման վրա, արտադրանքի և ապրանքների
ծավալների և անվանացանկի հավելվածներով, որոնք ստորագրվում են Կողմերի լիազորված մարմինների կողմից:

Հոդված 4

Կողմերից յուրաքանչյուրի՝ մյուս Կողմերի արտադրանքների նկատմամբ կիրառած մաքսային տուրքերն ու
հարկերը չեն գերազանցի մյուս երկրների՝ նման արտադրանքի նկատմամբ կիրառվող գումարը:
Ծառայությունների ու ապրանքների փոխադարձաբար մատակարարման հաշվարկը կիրականացվի
համաշխարհային գներով: Մատակարարման պայմանները կորոշվեն երկկողմ համաձայնագրերի հիման վրա:

Հոդված 5

Իրենց պետությունների միջև առևտրական հարաբերությունների զարգացման նպատակով Կողմերը
պայմանավորվեցին նվազեցնել կամ հանել ոչ սակագնային խոչընդոտները փոխադարձության հիման վրա՝
որոշակի դեպքերում, որոնք կհամաձայնեցվեն իրար միջև, տրամադրել ոչ սակագնային արտոնություններ:

Հոդված 6

Կողմերը կնպաստեն տնտեսական համագործակցության առաջնահերթ ուղղությունների զարգացմանը, բանկային փոխհաշվարկների և վարկային հարաբերությունների արդյունավետ համակարգերի իրականացմանը, որոնց կարգավորումը կորոշվի առանձին բանկային համաձայնագրով:

Հոդված 7

Փոխադարձ ներդրումների բնագավառում Կողմերը կնպաստեն ազգային տնտեսությունների արտադրական ինտեգրացիային, տնտեսությունների պետական և մասնավոր սեկտորի ներդրումային նախաձեռնությանը՝ համատեղ ձեռնարկությունների ձևավորման, արտադրության, առևտրի, ինչպես նաև տարբեր բնույթի ծառայությունների ոլորտի զարգացման մեջ: Համագործակցության այդ ուղղության կարգավորումը կիրականացվի փոխադարձ ներդրումների պաշտպանության և երաշխավորության վերաբերյալ հատուկ համաձայնագրերին համապատասխան:

Հոդված 8

Կողմերը անհրաժեշտ համարեցին իրականացնել շուկայական բարեփոխումների, առևտրատնտեսական և արտաքին տնտեսական հարաբերությունների, ինչպես նաև հարկերի, տուրքերի և մաքսային մուծումների համակարգերի փոփոխությունների հարցերով կիրառվող նորմատիվ ակտերի վերաբերյալ տեղեկության պարբերաբար փոխանակում:

Հոդված 9

Սույն Համաձայնագրի իրականացման և առևտրատնտեսական համագործակցության կատարելագործման հանձնարարականների մշակման համար Կողմերը կստեղծեն համատեղ կոմիտե: Կոմիտեի նիստերը կհրավիրվեն հաջորդաբար Կողմերի պետությունների մայրաքաղաքներում ոչ ուշ, քան տարին մեկ անգամ:

Կողմերը անհրաժեշտ համարեցին սույն Համաձայնագրի դրույթների մեկնաբանման կամ կատարման վերաբերյալ հարցերի քննարկման համար, Կողմերից որևէ մեկի խնդրանքով, համապատասխան ուղիներով անցկացնել անհապաղ խորհրդակցություններ:

Հոդված 10

Կողմերը համաձայնեցին, որ Կողմերի առևտրական պալատների միջոցով պայմաններ կստեղծվեն սերտ և արդյունավետ համագործակցությունը պահպանելու համար, անհրաժեշտության դեպքում կստեղծվեն համատեղ առևտրական պալատներ, կփոխանակվեն առևտրական պատվիրակություններ և կանցկացվեն մասնագիտացված սեմինարներ և կոնֆերանսներ, ցուցահանդես-տոնավաճառներ՝ յուրաքանչյուր երկրի արտադրանքին ծանոթանալու և մարկետինգի համար, ինչպես նաև դրա համար անհրաժեշտ պայմաններ կտրամադրվեն:

Հոդված 11

Սույն Համաձայնագրի դրույթները չեն խոչընդոտի ինչպես Կողմերի այնպես էլ երրորդ երկրների միջև նախկինում կնքված միջազգային բազմակողմ և երկկողմ պայմանագրերի և համաձայնագրերի կատարմանը:

Հոդված 12

Սույն Համաձայնագրին միանալու ցանկություն ունեցող մյուս պետությունները կարող են այդ անել միացող պետությունների և սույն Համաձայնագիրը ստորագրած Կողմերի միջև համաձայնեցված պայմաններով:

Հոդված 13

Բոլոր հարցերը, որոնք կծագեն սույն Համաձայնագրի կիրառման կամ դրա մեկնաբանման առթիվ, նախ և առաջ պետք է խաղաղ լուծում ստանան դիվանագիտական ուղիներով: Այն դեպքում, երբ հարցը լուծում չի ստանա, յուրաքանչյուր Կողմ, պահպանելով համապատասխան կանոններն ու նորմերը, պետք է մյուս Կողմերին ծանուցի

գործը միջնորդ դատարան հանձնելու մասին, որը պետք է կազմված լինի երեք միջնորդ դատավորներից, որոնցից երկուսը պետք է նշանակվեն Կողմերի կողմից, իսկ մեկը լինի հաշտարար դատավորը:

Գործը միջնորդ դատարան հանձնելու դեպքում յուրաքանչյուր Կողմ ծանուցումը ստանալուց 60 օրվա ընթացքում պետք է նշանակի միջնորդ դատավոր, և այդպես նշանակված երկու միջնորդ դատավորները պետք է վերջին նշանակումից հետո 60 օրվա ընթացքում նշանակեն հաշտարար դատավոր: Այն դեպքում, եթե Կողմերից մեկը չի կարողանա համապատասխան ժամկետում նշանակել իր միջնորդ դատավորին, կամ նշանակված միջնորդ դատավորները համապատասխան ժամկետում համաձայնության չեն գա հաշտարար դատավորի թեկնածության հարցով, յուրաքանչյուր Կողմ կարող է խնդրել Արդարադատության միջազգային դատարանի (ԱՄԴ) նախագահին՝ նման դեպքում նշանակել հրաժարվող Կողմի միջնորդ դատավոր կամ հաշտարար դատավոր:

Արբիտրաժային դատարանը պետք է որոշում կայացնի հետևյալ կանոններին ու նորմերին համապատասխան՝

- ա) սույն Համաձայնագրի դրույթներով,
- բ) միջազգային իրավունքով,
- գ) միջազգային առևտրական իրավունքով,
- դ) գոյություն ունեցող առևտրական փորձով:

Արբիտրաժային դատարանը ինքը կորոշի իր ներքին նորմերն ու ընթացակարգի կանոնները: Արբիտրաժային դատարանի գտնվելու վայրը կլինի որևէ երրորդ պետությունում, և համապատասխան ծախսերը հավասարապես կբաժանվեն Կողմերի միջև: Արբիտրաժային դատարանի որոշումները Կողմերի համար կլինեն վերջնական և պարտադիր:

Հոդված 14

Սույն **Համաձայնագիրը** կնքվում է 5 տարի ժամանակով և ուժի մեջ է մտնում նման համաձայնագրերի հաստատման համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարման մասին Կողմերի վերջին գրավոր ծանուցումը ստանալու պահից:

Նրա գործողությունը ինքնաբերաբար կերկարաձգվի, յուրաքանչյուր անգամ՝ մեկ տարով, եթե համապատասխան ժամանակաշրջանի լրանալուց վեց ամիս առաջ Կողմերից ոչ մեկը գրավոր չճանուցի մյուս Կողմերին նրա գործողությունը դադարեցնելու իր մտադրության մասին:

Կատարված է Աշգաբադ քաղաքում 1995 թվականի հունիսի 27-ին, երեք բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն, պարսկերեն, թուրքմեներեն, ռուսերեն և անգլերեն, ընդ որում բոլոր տեքստերն էլ ունեն հավասար իրավական ուժ: Տարակարծության դեպքում անգլերեն տեքստը կգերակայի:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 1997 թվականի հուլիսի 9-ից: